

11 Յուլիս

Ազգային երեսփոխանական Ժողովը բացուեցաւ:

Ամեն. ս. Պատրիարքը ներկայ չէր:

Ո՞վ բացաւ ուրեմն Ժողովը:

—Ոչ ոք... ինքնիրմէ բացուեցաւ:

Ս. Պատրիարքն նամակ մը գրելով Իզմիրլեանի՝ յայտնած էր թէ տկարութեան պատճառաւ չէր կարողացած ժողովոյն ներկայ գտնուիլ, թէ Աստուծոյ ողորմութեամբը հայկական խնդիրէն յուսահատ չէր, թէ տկարութեան պատճառաւ ամիսէ մի ի վեր պատրիարքարան գնացած չէր եւ ասկէ ետքն ալ երթալու ժամանակ չունէր եւ վերջապէս հրաժարական տալով կկնքէր նամակն:

Իզմիրլեան այս նամակն կարդաց, եւ ատենը... գոցուեցաւ դիւանի ընտրութենէ ետքը:

Հայկական խնդրէն չյուսահատիլն ամենուն ուրախութիւն պատճառեց, բայց *Աստուծոյ ողորմութիւնը* քիչ մը տրտմեցուց ժողովուրդը:

12 Յուլիս

Կարնոյ մէջ անհամաձայնութիւն երկու առաջնորդներու մէջ տեղ:

Հռովմէական ազգայիններու առաջնորդ Մելքիսեդէկ գերապայծառ կը պնդէ եղեր՝ տեղւոյն կառավարութեան ժողովներու մէջ գեր. Օրմանեանէ վեր նստել եւ թուղթերն անկէ առաջ ստորագրել:

Գեր. Մաղաքիա վարդապետ Օրմանեան կբողոքէ եւ ժողովէն դուրս կելնէ առանց ստորագրելու:

Եթէ ես Օրմանեանի տեղ ըլլայի, երբ կը տեսնէի, որ Մելքիսեդէկ իմ տեղս նստած է՝ ես ալ կ'ելնէի անոր կոնակը կը նստէի...: Նստելու վերաբերեալ խնդիրներն լուծելու կարճ ճամբան աս է:

**

Վանայ Պօղոս վարդապետը եպիսկոպոսութեան աստիճան բարձրանալ կփափաքի եղեր, եւ պատրիարքարանը Խրիմեանի կհարցունէ, թէ այդ մարդն արժանի՞ է եպիսկոպոսութեան: Յայտնի է, որ այս վարդապետին ի՛նչ ըլլալը քսան տարիէ ի վեր ազգին հասկցուցած է Խրիմեան, եւ այս պատճառաւ հալածուած է յիշեալ վարդապետէն եւ անոր արբա-